

Сержант Нерсисов
инж. зап.
- - - - -

9(47.925)

Б-35

1937

Հ Խ Ս Հ Լ ՈՒՍԺՈՂ ԿՈՄՍՏ

ՊՐՈՖ. Դ-Ր ԻՎ. ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

X Դ. ՅԵՎ. XIII Դ. ՍԿԶՐԵՆՐԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՑԵՐԵՆԻՑ՝ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ,
ՅԵՎ. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՀԱՆԳԵՐՁ
ՊՐՈՖ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ

ՅԵՐԵՎԱՆ

ԳԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

1937

9(47.925)

Է-35

9(47.925)

5 OCT 2011

Ջ-35 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՆ
ԿՑ

ՊՐՈՖ. ԴՐ ԻՎ. ԶԱՎԱՍԻՇՎԻԼԻ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

X Դ. ՅԵՎ XIII Դ. ՍԿԶՐԵՆՐԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՅԵՐԵՆԻՑԻ ԱՌԱՋԱՐԱՆՈՎ,
ՅԵՎ ԽԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՀԱՆԴԵՐԶ
ՊՐՈՖ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻ


ՀԵՕԼ 0101
840149

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼԻՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ

ՅԵՐԵՎԱՆ

ԴԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

1936



Գիտությունի սպարան
Գրավիտ № 2052
Պատկեր № 2
Տիպո 1000



ԱՌԱՋԱԲԱՆ

Վրաց պատմության անխոնջ հետազոտող, միաժամանակ
և հայագետ՝ պրոֆ. Իվ. Զավախիշվիլու բազմաթիվ հոյա-
կապ աշխատություններից, վերոնք հարուստ նյութ են պա-
րունակում, ի միջի այլոց, և Հայոց պատմության վերաբե-
րյալ, Государственный строй древней Грузии и древ-
ней Армении (Спб. 1905) և История церковного раз-
рыва между Грузией и Арменией в начале VII века
(„Известия Академии Наук“ 1908) մենագրություններից
հետո, անկասկած, նրա բազմահատոր «Վրաց ժողովրդի պատ-
մություն»-ն է (I հատոր—ա. տպ. 1909, բ. տպ. 1913 և գ.
տպ. 1928, II հատոր—1914, և IV₁ հատոր—1924): Այս
հատկապես Հայաստանի անցյալին և վերաբերում «Հայոց
պատմական գրականության» ա. գիրքը (Տփղիս 1935) և
յերկու փոքրիկ յերկասիրություն, վերոնցից մեկն է «Մի եջ
գյուղացիական շարժման պատմությունից հին Հայաստա-
նում» հոդվածը («Տփղիսի համալսարանի Տեղեկագիր», II,
1922—23, եջ 247—261), իսկ մյուսը՝ «Սոցիալական պայ-
քարի պատմությունը Վրաստանում IX—XIII դարերում»
գրքույկը, վորը 1934 թ. լույս տեսավ (Տփղիսի համալսա-
րանի հրատարակություն, Տփղիս, եջ 3—57). վերջինում հայ
լենթերցողի համար առանձնապես հետաքրքիր է յերրորդ
գլուխը հետեվյալ վերնագրով՝ «Անհամաձայնությունն ու
պայքարն յեկեղեցական հասույթների առթիվ Անիի վրաց և
քաղկեդոնիկ հայ հոտի ու հոգեվորականության միջեվ 1218
թ.» (եջ 9—21):

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր պրոֆ. Իվ.
Զավախիշվիլու վերոհիշյալ գրությունները, վորոնցից առա-
ջինն անմիջապես հիմնված է Ստեփանոս Որբելյանի «Պատ-

մութիւն Տանն Սիսական»-ի, իսկ յերկրորդն՝ Յեպիփան Վրաց կաթողիկոսի 1218 թ. Անիի վրացերէն հազվագյուտ արձանագրութեան վրա, կարեւոր նշութիւն են ներկայացնում սոցիալական պայքարի պատմութեան համար ֆեոդալական Հայաստանում, մենք նպատակահարմար գտանք այդպիսիները վերածել վրացերէնից հայերէնի՝ կցելով մեր թարգմանութեանը տեղ-տեղ մեր թեթեւ ծանոթութեանները Լ. Մ.-Բ. ստորագրութեամբ՝ անկյունաւոր փակագծերի մեջ:

Առաջին հոդվածը՝ թարգմանված լինելով դեռևս 1923 թվին հեղինակի հաճութեամբ նույնիսկ ղեկըցված եր «Վերահայոց Պատմա-Ազգաբանական Ընկերութեան» հրապարակական նիստին Տփղիսում նույն տարվա 12 փետրվարին: Իսկ մյուսը նորերս թարգմանվեց՝ համապատասխան գրքույկը լույս տեսնելուն պես: Յերկու գրութեանն մենք հարմար դատեցինք տալ մի ընդհանուր վերնագիր՝ «Նշութիւն Հայաստանի սոցիալական շարժումների պատմութեան համար X դ. և XIII դ. սկզբներին», վորով և հրատարակվում է մեր թարգմանութեանը:

Ի վերջո, անհրաժեշտ ենք գտնում ավելացնել, վոր յերկրորդ հատվածում շոշափած հարցը, ի միջի այլոց, ընդարձակ լուսարանված է և նորերս լույս տեսած Վարլամ Դոնդուալի հոդվածում „К социально-экономической жизни средневековой Грузии по Анийской надписи (1218) Епифания“ (Академия Наук СССР. XLV. Академику Н. Я. Марру. Сборник. М.-Л. 1935, стр. 643—670), նաև մասամբ ակադ. Ն. Մառի հետմահու հոյակապ գործի մեջ „Ани. Книжная история и раскопки на месте города“ (М.-Л. 1935, стр. 85, и табл. XLII, рис. 182).

Լ. Մ.-Բ.

Յերեվան. 9. XII. 1935.

I

ՄԻ ԵՋ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ
ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԻ ԵՋ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ
ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ¹

Մինչև վերջին քսանհինգ-յերեսուն տարիները Հայաստանի սոցիալական կազմի մասին ինչպես ոտար, նմանապես և առանձնապես հայ կուլտուրական շրջաններում և հետադոտողների մեջ իբրև անժխտելի ճշմարտութիւն եր համարվում այն հիմունքն՝ իբր թե հայոց ազգը դասային բաժանումն ու սոցիալական անհավասարութիւն չի ունեցել և ամբողջ ժողովուրդը միշտ ազատ եր ու բոլորն ել հավասար իրավունքների տեր: Պրոֆ. Ն. Մառը հին հայկական աղբյուրների և հնագիտական տվյալների հիման վրա միանգամայն խախտեց այս սխալ կարծիքը: Այս բոպեյիս արդեն ամենքը գիտեն, վոր դասային բաժանումը միջին դարերի Հայաստանի համար ել հասարակ յերեվույթ եր ներկայացնում: Սակայն Հայաստանի սոցիալական կառուցվածքի և [տիրող ու ստորադրյալ դասերի] փոխհարաբերութիւնների ուսումնասիրութիւն համար սրանից հետո ել շատ քիչ բան ե կատարված. բացի տողերիս հեղինակի մենագրութիւնը Государственный строй древней Грузии и древней Армении, վոր սկզբնական շրջանին ե վերաբերում, և պրոֆ. Ն. Ադնցի գրքի Армения въ эпоху Юстиниана, վոր VI դարուց հաղիվ հեռանում ե, հայկական հասարակական կազմի և [դասերի] փոխհարաբերութիւնը ուսումնասիրութիւն նկատմամբ համարյա թե վոչինչ չի տպագրվել: Ճիշտ ե, 1906 թ. Dr. Josef Karst-ը լույս ընծայեց իր Grundriss der Geschichte des armenischen Rechtes (նայիր՝ «Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft», XIX. B, II—III. Heft, S. 313—411, և XX. B, I. Heft, S. 11—112), իսկ պրոֆ. Ս. Յեղիազարովը 1919 թ.

Исследованія по исторіи армянскаго права публичнаго и частнаго (Вып. I, Кіевъ) ըստ Անիի և Շիրակի արձանագրությունների: Բայց գերմանացի գիտնականը Հայաստանի պետական կազմի մասին միմիայն անցողակի կերպով և այն ել յերկու յերեսի մեջ է խոսում, այնպես, վոր այնտեղ նոր վոչինչ չկա. իսկ Յեղիազարովը, գրաբարին և համապատասխան գրականությանը տեղյակ չլինելու շնորհիվ և պատմական հեռանկարներ չունենալու ու նրա վրա չհիմնվելու պատճառով, չկարողացավ մտադրված գործը պատշաճորեն իրականացնել: Այսպիսով Հայաստանի պետական և հասարակական կազմի ուսումնասիրությունը վերջին 15 տարվա ընթացքում կարծես բոլորովին չի առաջացել: Սրա պատճառներից մեկը վոչ միայն հարցի բարդությունը պիտի համարվի, այլ և այն հանգամանքը, վոր հայ պատմիչների յերկասիրությունների մեջ գտնվում են տեղեկություններ առանձնապես քաղաքական անցքերի և յերիցապետների ու վանական կենցաղի մասին, մինչդեռ ներքին նիստուկացն այնտեղ սակավ է բնորոշված: Թեև արձանագրությունների մեջ Հայաստանի կազմի ուսումնասիրության համար շատ թանգարժեք նյութեր են ցրված, սակայն միմիայն արձանագրություններով հետազոտողն անցյալ կյանքի պատկերը չի կարող վերականգնել, այլ յուրաքանչյուր հարց պիտի լուսաբանվի ուրիշ աղբյուրներից քաղած տեղեկություններով ևս: Գործի բարդության պատճառով ավելի լավ կլինեք, վոր Հայաստանի պետական կազմի ընդհանուր բնույթի պատմությանն առաջ ընթանալ հարցերի մենագրական ուսումնասիրությունը:

Ապագայում, յերբ Հայաստանի պատմությունը պատշաճ հիմնավորությամբ և խորությամբ կլինի ուսումնասիրված, այն ժամանակ ամենքի համար պարզ կլինի, վոր դասային բաժանումից դատ Հայաստանում սոցիալական պայքար ել է տեղի ունեցել, այնքան հզոր, վոր յերբեմն նույնիսկ ճակատագրական է դարձել: Տիրող և ստորագրյալ դասերի միջեվ ծագած կատաղի պայքարը հակադիր

խմբակներին և շարքերին յերբեմն ծայրահեղության ել է հասցրել և պայքարը կատաստրոֆայով վերջացել: Հայաստանի սոցիալական պատմության ամենից շատ կամ, ավելի ճիշտն ասած, իսկի չուսումնասիրված հարցերից մեկը պիտի համարվի գյուղացիների իրավական-տնտեսական կացությունն և տերերի ու ճորտերի միջեվ յեղած փոխհարաբերությունները, և այս իմ մենագրության նպատակն է հենց այս պակասի լրացումն: Սա ուղիղ 20 տարի սրանից առաջ եր գրված, բայց ցարդ մնաց չհրատարակված, քանի վոր մտադիր եյի ներկայացնել այն իբրեվ առանձին գլուխ «Հայաստանի պետական կազմ»-ին [նվիրված] յերկրորդ գրքին մեջ: Սակայն հարցը նրանից ել անկախ ինքնըստինքյան այնքան հետաքրքիր է և ուշագրավ, վոր նրա այժմ առանձին լույս ընծայելը, մինչեվ վոր մտադրած մեծ ուսումնասիրությունս կըտպվեր, կարծում եմ, [բնավ] ավելորդ չպիտի լինի:

Հայաստանում գյուղացիների շարժման պատմության մի եջի վերականգնումը շատ ժամանակ է, ինչ հնարավոր է, և յեթե ցարդ այս հարցն ուսումնասիրության [առարկա] չի դարձել, [միմիայն] այն պատճառով, վոր նախ՝ Հայաստանում այսպիսի հարցերի ուսումնասիրության հնարավորությունը վոչվոքի մտքովն անգամ չի անցել, իսկ յերկրորդ՝ վոր Ստեփանոս Որբելյանի պատմության վրա վոչվոք պատշաճ ուշադրություն չի դարձրել: Հայ պատմիչների շարքում Ստ. Որբելյանն արտասովոր յերեվույթ է ներկայացնում: Նա ուրիշ հայ պատմիչներից ակնհայտնի կերպով տարբերվում է՝ ինչպես պատմական նյութերի ընտրությամբ, նույնպես և ավանդելու յեղանակով: Նրանցից և վոչ մեկը՝ մեկ հարյուրերորդական մասն անգամ չունի այն տեղեկություններից, ինչ վոր Ստ. Որբելյանը Հայաստանի ներքին նիստուկացի և կազմի ուսումնասիրության համար իր հետազոտության մեջ հավաքեց: Ստ. Որբելյանը ներկայացուցիչն էր Վրաստանի պատմությունից հայտնի Որբելների տոհմի այն ճյուղի, վորը Գեորգ (Գիորգի) III-ից աքսորի յենթարկ-

վերլուց հետո՝ Հայաստանում գտավ ապաստան և հայացավ, և նա, Ս. Որբեյանը, XIII-րդ դարի վերջերում՝ Սյունյաց յեպիսկոպոս յեղած ժամանակ՝ յուր հոտի և թեմի պատմության նկարագրության ձեռնամուխ յեղավ։ Հայ պատմական աղբյուրների տեսությունը շուտով նրան համոզեց, վոր այնտեղ Սյունիքի և յուր հոտի վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ կան։ Գանի վոր նրա ցանկությունն եր հորինել միմիայն այս՝ իր թեմի պատմությունը, պատմագրական աղբյուրների բացակայության պատճառով նրան մնում եր հրաժարվել մտադրած գործի իրականացումից և այլ տեսակի աղբյուրներ վորոնել։ Ստ. Որբեյանը բարեբաղդաբար հենց այս յերկրորդ ուղին ե ընտրում։ Նյութերի վորոնումների ժամանակ նա հանգել ե բավականին ուրույն և ուշագրավ մտքի՝ պատմական յերեվոյթների ընթացքը վերականգնելու համար ոգտվել յեկեղեցիների ու տաճարների պատերի վրա մնացած արձանագրություններից և վանքերում պահպանված վավերագրերից։ Բայց ամենից շատ մեղ համար ուշագրավ և թանգարժեքն այն ե, վոր Ստ. Որբեյանն ըստ այս արձանագրություն-հրովարտականների (սիգեղների) չհորինեց միմիայն պատմական հյուսվածք, այլ յուր ընթերցողին կատարյալ հնարավորություն տվեց իր իսկ ձեռքով վերականգնած պատկերի իրողությունը ճշտել։ Իր խոսքերի ճշմարտությունը հաստատելու նպատակով նա շատ տեղ նույնիսկ կցեց իր աղբյուրների, արձանագրությունների կամ վավերագրերի իսկական ընագիրները։ Ի հարկե, Ստ. Որբեյանը մտցրած չունի բոլոր այն արձանագրություններն ու վավերագրերը, ինչ վոր նա տեսել ու կարդացել ե։ Մի քանիսի վրա նա ուշադրություն չի դարձրել, քանի վոր [նրանց մեջ] յուր պատմության համար պիտանի տեղեկություններ չի գտել, իսկ մի քանիսն այնպես ե յեղել յեղծված, վոր արդեն դժվար ե դարձել վերծանելու։ Սակայն, այն ել, ինչ վոր Ստ. Որբեյանն արձանագրությունների կամ հրովարտականների (սիգեղների) ընդլայնով մտցրեց իր հետագոտության մեջ, այնքան ուշագրավ ե և նշանակալից, վոր նրա

ծառայությունը Հայաստանի պատմության հանդեպ հավիտյան պիտի անմոռանալի մնա, մանավանդ, վոր այն ժամանակվա հրովարտականներից (սիգեղներից) և վոչ մեկը մեզի չի հասել և միակ աղբյուրն այն ժամանակվա հայկական դիպլոմատիկայի ուսումնասիրության համար Ստ. Որբեյանի յերկն ե։ Նրա տեղեկությունները թանգարժեք են առանձնապես Հայաստանի հասարակական ու ներքին նիստուկացը վերականգնելու համար։

*
* *

Ստ. Որբեյանի վավերագրերից յերեվում ե, վոր Սյունյաց յեպիսկոպոսների գործունեյությունը գլխավորապես տնտեսական և կալվածատիրական ե յեղել։ Այս կողմից դամանալի յե, վոր նրանց մտավոր և հոգեվոր գործունեյության մասին համեմատաբար շատ քիչ տեղեկություններ կան։ Նկատելի յե, վոր Սյունյաց յեպիսկոպոսներն ավելի իրենց տիրապետության ընդլայնացման և բարեկարգության մասին եյին հոգս քաշում։ Նրանք ամենուրեք աշխատում եյին, վոր իրենց անշարժ կայքն ամենայն կողմից ցանկապատված լինի և այլ սեփականատերերի հողերը նրանց հողերին չկաշեյին։ Այս նպատակով, նրանք՝ փոխանակության թե գնման միջոցով շերտընդմեջային կալվածքների վոչնչացման մասին եյին յերազում։ Սակայն անշարժ կայքի պահելն և նրա ամբողջովին՝ առանց շերտընդմեջության՝ ցանկապատումն այն ժամանակ՝ Հայաստանում այնպիսի հեշտ գործ չի յեղել։ Անշարժ կայքն յեկեղեցիներին ու վանքերին նվիրաբերողների սերունդն աստիճանաբար այնպես աճում և բազմանում եր, վոր տոհմական կալվածքը նրանց ալելվս չեր բավարարում և հողի պակասությունը հաճախ զգալի յեր դառնում։ Այսպիսի պայմաններում նրանք ոգտվում եյին ամեն տեսակ հարմար դեպքերից և խառնաշփոթությունից, վորպեսզի իրենց նախնիների ընծայած կալվածներն յետ դարձնեյին և դարձյալ տիրեյին։ Յեկեղեցական կալվածների հափշտակությանը Սյունյաց յեպիսկոպոսները, ի հարկե, անհոգ

չեյին վերաբերվի, և ամենուրեք ընդդիմադրություն եյին ցույց տալիս: Այս հողի վրա Սյունյաց յեպիսկոպոսներն և ազնվականների միջեւ յերբեմն դժգոհություն ել եր առաջացել և նույնիսկ սաստիկ պայքար պայթել:

Բայց Ստ. Որբելյանի հետադոտության մեջ պահպանված հրովարտականքից յերեւում ե, վոր Սյունյաց յեպիսկոպոսներն գուլքային-տնտեսական հողի վրա վիճակվում եր պայքարել վոչ միայն առաջավոր դասի ներկայացուցիչների հետ: Նրանց տնտեսական քաղաքականությունը, նրանց մուկեղին ձգտումը Սյունյաց յեպիսկոպոսական աթոռի անշարժ կայքի շերտընդմեջության վերացման և ցանկապատության և կտորահողերի վոչնչացման նկատմամբ նույնիսկ ցածր դասին՝ գյուղացիությանն ել ըմբոստացրեց: Տեղ-տեղ այս հանգամանքն յեպիսկոպոսի և գյուղացիներն միջեւ, հովվապետի առ հոտն՝ սիրո, և հոտի առ հովվապետն՝ հարգանքի փոխարեն առաջացրեց միմիայն մեկը մյուսի դեմ փոխադարձ թշնամություն և պայքար:

Անմիաբանությունն ու թշնամություն յեպիսկոպոսի և գյուղացիների միջև առաջանում եր սովորաբար հողերի պատճառով, կալվածքի շնորհիւ: Յերբեմն տարաձայնությունն ու դժգոհությունն առանձնապես առաջ եր գալիս յեպիսկոպոսա[նիստ] յեկեղեցուն նվիրաբերած հողերի առթիւ, յերբ նվիրաբերողների տիրապետության իրավունքն այս հողերի վերաբերմամբ թեական և պայմանական եր: Հաճախ խոշոր կալվածատերերն յեկեղեցիներին ու վանքերին մեծ հողեր եյին նվիրաբերում իրենց բնակիչներով և գյուղեր-ավաններով հանդերձ: Քանի վոր այսպիսի դեպքերում նվիրաբերված գյուղին կամ մենակյաց ճորտ-գյուղացուն սովորաբար անձեռնմխելիություն եյին շնորհում և պետական հարկերից անգամ ազատում, ցածր խավը, առանձնապես մասնավոր կալվածատերերի ճորտերը, յեկեղեցական ճորտ դառնալուց վոչ միայն չեյին խուսափում, այլև՝ ընդհակառակը՝ սովորաբար ուրախ եյին լինում: Նրանց նյու-

թական դրությունը, իբրև ապահարկային ճորտերի, ի հարկե, ալելի լավ եր, քան մնացած ճորտերինը:

Սակայն, անկախ ճորտերից, հողը գյուղացիների սեփականություն եր համարվում: Հենց վոր Սյունյաց յեպիսկոպոսներն իրենց յեպիսկոպոսական աթոռի շուրջը գտնվող գյուղերն իրենց հարևան կալվածատերերից իբրև նվեր ընդունեցին, սկսեցին իրենց բնակավայրի սահմանների ընդլայնացումն ու մաքրումը: Նրանք, ինչպես յերևում ե, ցանկանում եյին, վոր աթոռին կից վոչ մի բնակչություն չլինի, և դրա համար հարևան գյուղերի բնակիչներին ստիպում եյին թողնել իրենց տեղն և փոխադրվել ուրիշ տեղ: Ի հարկե, սա գյուղացիներին բնավ դուրեկան չեւ: Գյուղացիներն յերբեք չեյին ցանկանում տեղահան լինել («հանել ի տեղուցն», հրատ. Էմինի, եջ 168) և յեպիսկոպոսներին դիմադրություն եյին ցույց տալիս: Այս հողի վրա յերկու կողմից ել մեծ ու անշեջ թշնամություն առաջացավ:

Այսպիսով Սյունյաց յեպիսկոպոսական աթոռի շուրջը գտնվող գյուղերը՝ Յուրն իր բերդով («Յուրայ բերդ»), Տամալեկը («Տամալէկ») և Ավելադաշտի բերդն ու ավանը («Բերդ... յափն քարին, որ Աւելադաշտն կոչեն») այլ և այլ անձինք նվիրեցին («տուրս արարին») Տաթևի յեպիսկոպոսական աթոռին (Պատմ., հրատ. Էմինի, 167—168): Նվիրատվության բուն գրությունները Ստ. Որբելյանը չի բերում, [ուստի և] վճռականորեն ասել, թե նվիրատուներն ի՞նչ պայմանով ունեյին հանձնած այս գյուղերն ու կալվածքները, դժվար ե: Արդեն XIII-րդ դարու վերջերին, յերբ Սյունյաց պատմիչը գրում եր իր աշխատությունը, այն հրովարտականերն (սիգեղներն) այնքան հնացած ու յեղծված են յեղել, վոր այնտեղ շատ քիչ բան եր կարդացվում—այն ել շատ մեծ դժվարությամբ («հնացեալ և ծայրատեալ, զոր ի բազմացն գտական կարացաք ընթեռնուլ», Էմինի 167): Բայց ինքնըստինքյան հասկանալի չե, վոր այստեղ ել սովորական վանական ճորտեր նվիրաբերելու [տեղեկացը] պիտի տեղի ունենար և ուրիշ վոչինչ: Այս հանգամանքը նրանով ել ե

հաստատվում, վոր Ստ. Որբելյանն այս նվիրաբերության հատուկ պայմանների մասին վոչինչ չի ասում: Վերոհիշյալ գյուղերի բնակիչներն իրենց յերկրի հին կալվածատերեր, սեփականատերեր ու բնիկներն եյին («հին հայրենատէրք էին», Պատմ., էմին 168):

Սյունյաց յեպիսկոպոսները ցանկանում եյին այս գյուղացիներէ կալվածքի և հողի լիակատար յուրացումն ու սեփականացումն («սեպհականել»): Սրա համար, ի հարկէ, անհրաժեշտ եր նրանց տեղահանելն ու գաղթեցնելը, և [Սյունյաց հովվապետներն] իսկապես դիմել են այս գյուղացիներէ իրենց հայրենիքից հանելուն («հանել ի տեղւոյն»), բայց վոչ մի ճանապարհով չեն կարողացել («զբնակիչս բերդին Յուրայ ոչ կարացին հանել... որպէս եւ ոչ զՏամալէկն... կարացին սեփականել... մի բերդ... յափն քարին, որ Աւելադաշտն կոչեն... դայն ևս ոչ հալածեցին», Պատմ., էմին 168):

Իրենց հարեան ճորտ-գյուղացիներէ այսպիսի անգուլթ դիմադրութեան առթիւ Սյունյաց Հովհաննէս յեպիսկոպոսն ու Տաթեւի վանականները չեն տարակուսել: Ընդհակառակը, պայքարն առաջվա նման շարունակվում եր և փոխադարձ դիմումն ու համաձայնութիւնն հակառակորդների մտքովն անգամ չեր անցնում: Ժողովուրդը չարացած եր: Արմատահանելն ու հայրենիքից աքսորելը նրա սիրտը զայրուցթով ու հատուցման ծարավով եր լցնում: Համբերութիւնից դուրս յեկած Յուր ավանի բնակիչները, ինչպես յերևում ե, կանխապես համաձայնվելով և դավադրութիւն կազմելով, մի գիշեր անակնկալ կերպով հարձակվում են վանքի վրա, վանականներից մի քանիսին սպանում, իսկ վանքն ամբողջապես կողոպտում: Այս մասին մեզ նույնիսկ հասել ե մի պաշտոնական տեղեկութիւն հրովարտակի (սիգելի) ձևով, վորը Հովհաննէսի իսկ ձեռքով ե յեղել գրած 915 թ. Ք. հ.: Ահա թե ինչ ե պատմում նա այս գողոնի հարձակման մասին. «Եհաս մեզ վտանգ տաքնապի ի չար և յանաստուած ելուդակացն, որ բնակեալ էին ի Յուրաբերդ անուն քարին, որը

յանկարծակի յարուցեալ ի վերայ յոգնաժողով եղբարցն ի գիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն և զոմանս սպանին ի ծերոցն» (Պատմ., էմին 181, Ղուկասյան հրատ. 248):

Ստ. Որբելյանի խոսքով, Յուրբերդից հարձակումից հետո իբր թե սրբապղծութիւն ել են կատարել և յեկեղեցուց արծաթե սափորով փախցրած մեռնը քարի վրա թափել («արծաթի սափորով զմեռնն... վայթեցին ընդ քարն», ibid., էմին 180—181, Ղուկ. 247): Բայց սրա մասին Հովհաննէսի հրովարտակում (սիգելում) վոչինչ չկա ասված, և սա ըստ յերևույթին ներկայացնում ե բանավոր կերպով հետագայում հյուսված մի ավանդութիւն հարձակվող գյուղացիների կատարյալ անաստվածութիւնն ու ավազակութիւնը հաստատելու նպատակով:

Նույն պատմիչն ասում ե վոր, Յուրբերդից թախանձանքով պահանջում եյին Տաթեւի վանականներից՝ ցույց տալ նրանց Սյունյաց յեպիսկոպոսին, քանի վոր մտադիր եյին սպանել յեպիսկոպոսին («խնդրէին զեպիսկոպոսն, զի սպանիցեն», ibid.): Թեև այս հանգամանքն ել հիշված չե 915 թ. վերոհիշյալ հրովարտակում, բայց այս տեղեկութիւնը ճիշտ պետք ե լինի: Ինչպես յերևում ե, յերեցապետը պատահամբ այն գիշեր տանը չի յեղել, յերևի վորեւ տեղ կլիներ գնացած: Հարձակվողները փնտռել են յեպիսկոպոսին, սակայն վոչ մի տեղ չեն գտել: Յերկրորդ որը, յերբ յեպիսկոպոսը վերադարձել ե, տեղեկացել ե Յուրբերդից կատարած գործի մասին և կողոպտած-հափշտակած վանքը գիտել, և յեկեղեցում պահվող հայտնի սքանչելագործ խաչը վերցրել ուրիշ տեղ փախել: Կատարած գյուղացիներէ զայրույթից ազատված վանականներն ևս իրենց հովվապետի այսպիսի որինակից հետո այլևս չեն համարձակվել մնալ վանքում և ցիր ու ցան են յեղել: Ամբողջ այս յեղելութիւնն ինքը Հովհաննէս յեպիսկոպոսն ել ունի մասնանշած².

Սյունյաց յեպիսկոպոսի ամբողջ գործունեյութիւնը վկայում ե, վոր նա [անպայման] տեղյակ պիտի լիներ, թե ինչպիսի փորձանք եր սպասում նրա կենդանութեանը, յեթե

Տաթևի վանքում մնար: Ուստի և հասկանալի չե դառնում, վոր վանքի վրա հարձակվելու ժամանակ Յուրբերդցիք իսկապես իրենց քամբադղացնող յեպիսկոպոսի սպանելն են ուզեցել: Վանականներից ել յերևի այն անձինք պիտի սպանվելին, վորոնք այս գյուղացիներին թվում էին իբրև իրենց տեղահանության և գաղթեցման նախաձեռնողներ:

Ստ. Որբելյանը, ի հարկե, ըստ նույն հետազայի բանավոր ավանդության, ասում ե, վոր Հովհաննես յեպիսկոպոսը փախչելուց առաջ Յուրբերդցոց սաստիկ անիծել և նզովել ե, և իբր թե սրա պատճառով աստծո գայրույթը հասել ե այս գյուղին և զարհուրելի յերկրաշարժի շնորհիվ հողը ձեղքվել և շինությունները ժողովրդով կործանվել են (ibid. էմին, Ղուկաս. 247): Վոր բարկացած յերեցապետն առանց անեծքի չեղ գնա, սա հեշտ ըմբռնելի չե, բայց տեղեկությունը Յուրբերդի յերկրաշարժից փաստվելու և պատժի մասին պետք ե սուտ լինի, քանի վոր ինքը Հովհաննեսն ել իր 915 թ. վավերագրի մեջ [սրա մասին] վոչինչ չի ասում:

Յածր խավը, գյուղացիությունը, միշտ պահպանողական ուղղությանն եր ավելի պատկանում: Կրոնի և հոգևորականության յերկյուզն ու աղբեցությունը միշտ հզոր եր և գրեթե անսահման: Իսկ յեթե, չնայած այս հանգամանքին, Յուրբերդցիք [այնուամենայնիվ] համարձակվեցան հարձակվել յեպիսկոպոսական աթոռի ու վանքի վրա, սա այն հանգամանքի արտահայտիչն ե, վոր այս յեկեղեցական ճորտերի համբերության բաժակը լցված եր և փոխհարաբերությունները կալվածատերերի և ճորտերի միջև ավելի ևս կատաղած: Հարձակման ժամանակ գործ դրած սանձարձակ գայրույթը, վանական կայքի հափշտակությունն ու հատկապես վանականներին սպանելը պարզ կերպով հաստատում ե, վոր գյուղացիների բարկությունն այլևս սահման չունեի, նրանց սիրտը սանձարձակ կրքերի ալեկոծումից տրոփում եր հատուցման անդուստլ ծարավով և բանականության ականջն արդեն խլացել եր:


Իսկ այն ժամանակ վանականը (մոնողոնը) ժողովրդի աչքում յերևում եր իբրև Քրիստոսի պատկերի ամփոփող, և նրա վոչ միայն սպանելը, այլև վերավորելը ծանր և անքավելի մեղք եր համարվում, իսկ յեթե հարձակվողները սրա առաջն ել կանգ չառն, այս ել, ի հարկե, գյուղացիների գայրույթի ծայրահեղության ապացույցն ե:

Հենց վոր Սմբատ Սյունյաց իշխանն այս յեղեղությունը նկատեց, պարտք համարեց խառնվել այս գործի մեջ և հափշտակված-ֆնասված յեպիսկոպոսական աթոռն ու վանքը պաշտպանել և հովվապետի վոտնահարված պատիվն ու աղբեցությունը վերականգնել: Նույն Հովհաննես յեպիսկոպոսի խոսքով, գայրացած Սմբատը, վոր իր կորովի սրտի և ըստ մեծ հավատի՝ վոճրագործության առթիվ առյուծի նման մրմուռում եր, բոլորին ցիր ու ցան արավ, իսկ յեկեղեցին ու անֆնաս մնացած վանական միաբանությունը դառն նեղությունից ազատեց և նույն վայրն յեպիսկոպոսին հանձնեց³:

Ուրեմն Սմբատ Սյունյաց իշխանը Յուրբերդի բնակիչներին ցիր ու ցան ե արել, իսկ նրանց գյուղը՝ հողի հետ հավասարեցրած և կործանված՝ բռնազբաղող յեպիսկոպոսին ու վանքին ե հանձնել այժմ արդեն ի կատարյալ սեփականություն: Հեշտ յերևակայելի չե, վոր թեև սրա մասին Սյունյաց յերեցապետը լուռ ե, բայց այս տեղահան և ցիր ու ցան լինելը Յուրբերդցոց թանգ կնասեր, և [նրանցից] վոչ միայն մեկը կամ յերկուսը կոհներ իր կյանքն այն վանականների (մոնողոնների) արյան համար, վոր նոքա հոսեցրին իրենց՝ Տաթևի վրա հարձակման ժամին... Այս դեպքը տեղի ե ունեցել 915 թ.:

Այսպիսով, Սյունյաց յեպիսկոպոսն ու վանքն իրենց յերկար ժամանակվա փափագին հասան, Յուրբերդցիք տեղահան և ցիր ու ցան յեղան: Սմբատ իշխանի հրամանի համաձայն այս տեղում բնակչությունը պետք եր հավիտյան անհետացած ու ջնջված լինել: Այստեղ բնակչություն հաստատելու իրավունք վոչվոք չունեի ու նրա վերաշինությունը սաստիկ կերպով արգելված եր: Ավելի մեծ ամբու-

ՀԷՕԿ
1010
41.048



թյան և անփոփոխության համար Հովհաննես յեպիսկոպոսը 915 թ. հրովարտակի (սիգելի) մեջ հետևյալ նշով՝ քանի որ մտցրեց այս կարգադրությունը խախտողների դեմ: «Եթէ ք. հրամանիս մերոյ հակառակի և առնու զՅուր ի սուրբ եկեղեցւոյս և կամ կամի զսուտ քարդ բերդ անուանել և շինութիւն խորհիլ և կրկին հալածումն յարուցանել սուրբ եկեղեցւոյս՝ այնպիսին նշովեալ եղիցի յԱստուծոյ ամենակալէ... և եղիցին որդիք նորա ի սատակումն և յազգէ ջնջեսցի անուն նորա» (ibid., էմին 182, Դուկ. 249—250):

[Բայց] Հովհաննես յեպիսկոպոսը չի բավականացել միմիայն Յուրբերդացոց տեղահանի ու աքսորի յենթարկելով, այլև՝ միաժամանակ՝ ցանկանում էր մյուս մերձակա գյուղերի վոչ գուրեկան հարևանությունիցն [եւ] ազատվել: Ի միջի այլոց, Սյունյաց յերեցապետը Տամալեկ գյուղին եւ Եղդիւ իր նետը: Նա վոչինչ չէր խնայում, վորպեսզի Տամալեկցոց [եւ] արմատից հաներ և ուրիշ տեղ գաղթեցներ, վոր նրանց հողը վանքին անցներ ի կատարյալ սեփականություն: Բայց ամենայն տեսակի փորձն ապարդյուն անցավ: Չնայած նրան, վոր Տամալեկցիք թշնամաբար եյին վերաբերվում դեպի իրենց հոգևոր և մարմնավոր տերն ու դառնացնում եյին վանքի կյանքը, նրանց՝ նախահայրերի տեղիցն շարժելը վոչ մի ճանապարհով չհաջողվեց (տես. Հակոբ յեպիսկ. սիգ., էմին 198, և Դուկ. 254):⁴

Ուշադրության արժանի է, վոր հրովարտակի (սիգելի) մեջ առատ մտցրած սարսափելի անեծք-նշովքն եւ [բնավ] չի ապահովել Սյունյաց յեպիսկոպոսին և վանքն անբավարարությունից, և այս տեղահանով չի վերջացել տերերի և ճորտերի միջև առաջացած յերդմնազանց պայքարը: Հարատե ժամանակն եւ չզսպեց և ավելի ևս կատաղեցրեց սոցիալական հողի վրա բորբոքված կրքերի այնկոծությունն ու վոխերիմ թշնամիներին չհաշտեցրեց: Յերկար ժամանակից հետո, յերբ վոր յեպիսկոպոսական աթոռը թափուր եր և յեկեղեցին հովանավորող տեր ու հովվապետ չունեի, այս անցողակի դրության [ժամանակ] գործերի բնական շփոթու-

թյունից ոգտվել են Յուրբերդից ելած գյուղացիներն և վերստին վերադարձել իրենց գյուղի տեղն ու նախնիների հայրերիքը: Դալով այնտեղ՝ նրանք առաջվա նման տիրացան այս տեղին և «վերստին շինեցին» գյուղն: Բավական եր, վոր Յուրում բնակչություն գոյանար, վորպեսզի իսկոն և եթ յեպիսկոպոսի ու վանքի և գյուղացիների նույն անբավականությունն ու յերդմնազանց թշնամությունը վերանորոգվեր: Սակայն այս անգամ ագրարային կռիվ կրկին բորբոքված կրակի խարույկն ավելի նենգությամբ և արագությամբ եր ընթանում: Սյունյաց յեպիսկոպոսական աթոռի նորընծա Հակոբ յերեցապետն [եւ] չկարողացավ իր գործունեյությանն նոր ուղի ընտրել և առաջացած թշնամությունը կանգնեցնել: Ընդհակառակը Հակոբ յեպիսկոպոսն իր հոտը կազմող ճորտերի համար Հովհաննեսիցն եւ ավելի խիստ կարվածատեր հանդիսացավ: Նա աշխատում էր մյուս հարևան գյուղերի բնակիչներին տեղահանի ու գաղթի յենթարկել: Ավերադաշտի գյուղն եւ դեպի յեպիսկոպոսական աթոռն ու վանքը թշնամաբար եր վերաբերվում: Նա եւ իր սեփականության պահպանման համար եր պայքարում: Բայց մոտ 930 թվին Սյունյաց յերեցապետը, վոր Ավերադաշտեցոց հետ վոչինչ չկարողացավ անել, Սյունյաց իշխանին դիմեց և նրա աջակցությամբ իր փափազին հանգեց: Իշխանն Ավերադաշտում ապրողներին հալածեց, ըմբոստության այս բունը քանդեց, կործանեց և հողի հետ հավասարեցրեց, իսկ գյուղի տեղն յեպիսկոպոսին ու վանքին հանձնեց ի կատարյալ սեփականություն: Այստեղ եւ հռելի անեծք-նշովքով լի համապատասխան հրովարտակը պիտի ընդմիջտ անբնակ թողներ Ավերադաշտն ու նրա վերստին շինության միտքն անգամ քայքայեր (ibid., էմին 188, Դուկ. 257):⁵

Ավերադաշտեցոց վրա [տարած] հաղթությամբ քաջաբերված կամ առաջվա նման թագավոր-իշխանների աջակցության վրա հույս տածող Հակոբ յեպիսկոպոսը փորձեց տեղահան անել նաև Տամալեկցոց: Հովհաննես յեպիսկոպոսի փորձի ապարդյուն հետևանքը Հակոբ յեպիսկոպոսի համար

մտածմունքի առարկա բնավ չէր դարձել: Բայց, ինչպես յերևում է, ուղիղ ճանապարհով և սեփական ուժով նա ել չգտավ [վորեն] հնար հաղթահարելու Տամալեկցոց վճռական ընդդիմադրությունը: Գյուղացիները չէին ուզում հոժարակամ գիջել վանքին իրենց նախնիների գույքը, իսկ բռնի կերպով ինքը՝ [Հակոբը] մեն-մենակ անդոր եր տեղահան անելու Տամալեկցոց: Նրանք ել ուրիշների նման՝ հողի և կալվածքի տերեր էին («հայրենատէր») և բնիկ ժողովուրդ: Քանի վոր Հակոբ յեպիսկոպոսն այլ կերպ վոչինչ չսարքեց, փորձեց փողի միջոցով հոգուտ իրեն շուռ տալ գործն և այդ նրան հաջողվեց ել: Նա վերցրեց և 1000 դահեկան տվեց, իբրև վարձատրություն, Սյունյաց Սմբատ իշխանին և Սոփիա իշխանուհուն: Նրանք՝ սրա փոխարեն՝ Տամալեկցոց իրենց բնիկ նախնիների հողից տեղահան արին և ամայի դարձած գյուղի տեղն Հակոբ յեպիսկոպոսին ու վանքին հանձնեցին: Սյունյաց հովվապետը, վորպեսզի հողի տերերն յետ դառնալ և վերստին բնակվել այլևս չկարողանային, ախտեղ յեկեղեցի կառուցեց և վանականների համար անապատ դարձրեց: Հակոբ յեպիսկոպոսն անգամ անհրաժեշտ համարեց կցել [սրան] սարսափելի անեծք-նզովքը, վորպեսզի Տամալեկի վերաշինությունը վոչվոքի մտքով չանցներ: Ամբողջ այս դեպքը Հակոբ յեպիսկոպոսը պատմած ունի համապատասխան իր հրովարտակում (ibid., էմին 198, Դուկ. 271—27) ⁶:

Այսպիսի հաջողությունից հետո Հակոբը, ի հարկե, չեր ների ծուրբերդցոց կամայականությունն ու կամակորությունը: Նա աշխատում էր նրանց աքսորելու: Դրանից է, վոր ծուրբերդցիք հենց Հակոբ յեպիսկոպոսին ընդունում էին իբրև իրենց մահացու թշնամուն: Քանի վոր այս կատարած պայքարի ժամանակ խաղաղության և սիրո առաքյալ կամ թշնամությունն զովացնող միջնորդ վոչ մի տեղից չեր յերևում և գյուղացիները չունեին իրենց պաշտպանն ու հաշտեցնողը, դարձյալ իրենց սեփական խելքով և ըստ [իրենց] կարողության նրանց վիճակվեց վորոնե մի յեկը

այս բարդ ու անհուսալի դրությունից դուրս գալու համար: Նոցա՝ կրքերի ալեկոծումից հուզված գլուխը դավադրությունից և վրեժն հանելուց ավել վոչինչ չհնարեց: Նրանք՝ վանքի վրա կրկին հարձակվելով և ավերումով՝ սկսել են վոխը հանել: Սակայն յերբ Հակոբ յեպիսկոպոսը՝ գնացած լինելով իր թեմի սահմաններում [գտնվող] Բաղ կոչված տեղը՝ վերադառնում էր, ըստ յերևույթին, համաձայն գաղտնի դավադրության և վորոշման՝ ոգտվել են այս դեպքով, վորպեսզի իրենց անգուժ հովվապետին և կալվածատիրոջն ուղարկեյին հանդերձյալ աշխարհ: Այս վճիռն ի կատար ածելու նպատակով ծուրբերդցիք Սյունյաց յեպիսկոպոսի անցնելու ճանապարհին դարան են մտել, և այդ տեղից հանկարծակի հարձակվել են անհոգ տուն վերադարձողի վրա և տեղն ու տեղը սպանել (ibid., էմին 183, Դուկ. 250) ⁷:

Հակոբ յեպիսկոպոսի փոխանորդ Գրիգոր յեպիսկոպոսը դարձյալ թագավոր-իշխաններին և դիմել ու խնդրել աջակցություն և պաշտպանություն բռնադատողներից: Վասակ արքան և Սևադա իշխանաց-իշխանն Սյունյաց յեպիսկոպոսի խնդիրը հարգել են և ծուր բերդն ու գյուղը դարձյալ ավերել, իսկ բնակիչներին ջարդել (ibid., էմին 183, 251. «որդնալից սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան: Իսկ ի ժամանակի մերում հրամայեցին աւերել յատակել»): Այսպիսի սոսկալի դժբաղդությունմբ վերջացավ այս պայքարն յերկու հակադիր կողմերի համար. գուղացիների հողն յուրացնել ցանկացող հզոր յեպիսկոպոսներն ու վանականներն իրենց կյանքը զոհեցին, [իսկ սրան] զուգընթաց ճորտերն՝ իրենց անշարժ ու շարժական գույքն ու բարորությունը:

Ահա այն ամենը, ինչ վոր հնարավոր էր հետազոտել Սյունյաց յեպիսկոպոսության հարևան գյուղերի ընդդեմ կազմակերպած պայքարի և այս թեմում գոյություն ունեցող ճորտատիրական փոխհարաբերության մասին: Դժբաղդաբար, Ստ. Որբելյանը ֆնացած գյուղերի մասին վոչ տեղեկություններ է տալիս, և վոչ էլ վավերագիր է թողել

ապագա սերնդի համար: Սակայն այն ել, ինչ վոր այս պատմիչը մտցրած ունի իր նշանակալից հետազոտություն մեջ, բավականին լույս է սփռում և պարզ պատկեր է տալիս Սյունյաց յեպիսկոպոսի ինչպես տնտեսական և հողատիրական քաղաքականություն ու գործունեություն, նմանապես և այն հարաբերությունաց մասին, վոր նոքա այլ դասերի, իսկ գլխավորապես յեկեղեցական ճորտերի հետ ունեյին: Վավերագրերից քաղած տեղեկություններից համոզվեցինք, վոր կալվածատիրական հարաբերությունները հարևանների հետ ավելի ևս կատաղի են յեղել և [վոր] հակառակորդների կողմից գրեթե 30 տարվա ընթացքում տարվում եր կործանարար պայքար: Ի հարկե, ինչպես այս պայքարի ժամանակակից Սյունյաց յեպիսկոպոսները, նմանապես և ինքը Ստ. Որբելյան պատմիչը չեն խնայում գրիչ ու թանաք, վորպեսզի վավերագրերն ու պատմությունը կարդացողին՝ մարտնչող ցածր ժողովուրդն և գյուղացիություն իբրև գլխից ձեռք վերցրած թալանիչ և ավազակներ ներկայացնեյին: Նոցա գյուղերը ավազակների բռն են, [իսկ] իրենք գյուղացիներն յեղել են անաստվածներ և բարբարոսներ, զուրկ մարդկային բոլոր հատկություններից, գազանաբարո և գազանի բնավորությունը [ոժտված]: Սակայն միթե հավատալի չե, վոր հենց յեպիսկոպոսական աթոռին կից գտնվող գյուղերն հանդիսանալին իբրև ավազակներ և հեթանոսներ: Ել հար եր հովապետներն ու նրանց լուսավորիչ մաքրող ազդեցությունը: Ո՞րքան հավատալի չե, վոր մի քանի հարևան գյուղերն առանց [վորեն] պատճառի սկսեյին թշնամություն՝ հանդես գլեղեցու և յեպիսկոպոսին ու այնպես համարձակ ու չարամիտ դառնալին, վոր նույնիսկ կանգ չառնեյին յերեցապետի սպանություն առաջ, յեթե այս պայքարն ու թշնամությունը խորը հիմք չունենար և ցածր ժողովրդի կենսական շահերին չդիպչեր: Վավերագրերի վրա հիմնված վերևում բերած գործի իսկական եյություն վերլուծումը, կարծում եմ, պիտի պարզի, վոր այստեղ մենք վնչ թե ավազակների անուղղելի

վոճրագործությունների հետ գործ ունինք, այլ այն շարժման հետ, վորը գյուղացիներն եյին կազմակերպել, ընդդեմ կալվածատերերի, վորոնք ուզում եյին ճորտերի սեփականությունը իրենց ձեռքը գծել: Փոքր է այս պատկերը, վորը բացվում է մեզ X-րդ դարու սկզբների Հայաստանի սոցիալական կյանքից, բայց սրանով այն՝ իր մեծ նշանակությունը նշույն անգամ, ի հարկե, չի կորցնում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[¹ Այս աշխատությունը՝ վերնագրով գլխաւ մոնարքիս իստրիս երբի փուրցելի ձվել սումսեբել տպեց «Տիգրիսի Համալսարանի Տեղեկագրի» № 2-ում (Տփ. 1922—1923), էջ 247—261. Լ. Մ.-Բ.]: ...

² «Իսկ մեք տեսեալ զայնպիսի աղէտս՝ առեալ զսուրբ խաչն հալածական եղաք յայլ աշխարհ եւ կրօնաւորքս ամէն ցան ու ցիւ եղեն» (ibid., էջ 181, Դուկ. 248): Ծանոթ. հեղինակի:

³ «Ըստ քաջ սրտին եւ մեծայոյս հաւատոյն՝ իբրեւ զառիւծ մըր՝ մըռեալ ի վերայ չարացն, ցան ու ցիւր կացոյց զամենեսեան... զերծուցեալ հանգոյց զսուրբ նշանս եւ զեկեղեցիքս, եւ զմեզ եհան յանդորր ի դառն նեղութենէ, և աւանդեաց ի ձեռս մեր զտեղին» (ibid., էջ 181—182, Դուկ. 248—249): Ծանոթ. հեղինակի:

⁴ «Գճամալէքս, որ բազում նեղութիւն էին հասուցեալ տանս, և տեսուն Յովհաննիսի ջանացեալ էր և չէր կարացեալ թափել: Ծանոթ. հեղինակի:

⁵ «Յայնմ ժամանակի աւագականացն, որ հանդէպ վանիցն կայր ի վերայ ուսոյն, որ Աւետարաշտն կոչեն, ... լի էր երուզակ մարդովք, որք բազում ոճիրս գործէին եւ յոլով նեղութիւնս հասուցանէին եղբարցն եւ այլ շրջակայ սահմանացն: Յայնմամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց եւ հրաման առեալ՝ հալածական արար զարսն, քանդեալ աւետաց զապստմբանց նոցին եւ հիմնախիլ արար եւ զտեղին սահմանովն սեպհականեաց եկեղեցւոյն, և մեծամեծ և ահագին նոզովիւք փակեաց, զի մի ոք այլ իշխեսցէ անդ բնակիլ կամ շինութիւն առնել: Ծանոթ. հեղինակի:

⁶ «Այս իմ ձեռին գիր է տէր Յակովբայ Սիւնեաց եպիսկոպոսի. բազում ջանիւ և աշխատութեամբ թափեցի զճամալեկս, որ բազում նեղութիւն էին հասուցեալ տանս, և տեսուն Յովհաննիսի ջանացեալ էր և չէր կարացեալ թափել: Արդ հնազանդեալ մեր հրամանացս՝ սեր Սմբատ եւ

Սովիա սիկին առին ընդ զնոյ հազար դանեկանի եւ ետուն ի սուրբ
նշանս... եւ մեք առաք եւ եկեղեցի շինեցաք եւ միայնաւան հաստատեցաք:
Արդ որ զայս տեղս, որ մեք մեծ ջանիւ թափեալս՝ եմք և զհայրենա-
սերսն հանեալ, և անապատ հաստատեալ, և մտածէ որ զսա ի հայրենա-
տէրսն տալ, կամ կանամբի մարդ ի սմա քնակեցուցանել... Նշովեալ
եղիցի»: Ծանոթ. հեղինակի:

⁷ «... Կրկին աւերեցին զվանսն: Եւ եպիսկոպոսն տէր Յակովբ եր-
թեալ էր ի Բաղս եւ դարձեալ զայր անտի, իսկ շնաբարոյսն այն գաղտ
պահեալ զճանապարհն, որ անցանէ ընդ խոռն Յուրայ՝ յարեան ի վե-
րայ և սպանին զեպիսկոպոսն»: Ծանոթ. հեղինակի:

II

ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՅՔԱՐՆ
ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՆԻԻ ՎՐԱՑ ՅԵՎ ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ՀԱՅ
ՀՈՏԻ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ 1218 Թ.

Սովիա թիկն առին ընդ գնոյ հազար դանեկանի եւ ետուն ի սուրբ
նշանս... եւ մեք առաք եւ եկեղեցի շինեցաք եւ միայնարան հաստատեցաք:
Արդ որ զայս տեղս, որ մեք մեծ ջանիւ թափեալս եմք և զհայրենա-
սերսն հանեալ, և անապատ հաստատեալ, և մտածէ ոք զսա ի հայրենա-
տէրսն տալ, կամ կանամբի մարդ ի սմա քնակեցուցանել... չղովեալ
եղիցի»: Ծանոթ. հեղինակի:

⁷ «... Կրկին աւերեցին զվանսն: Եւ եպիսկոպոսն տէր Յակովբ եր-
թեալ էր ի Բաղս եւ զարձեալ զայր անախ, իսկ շնաբարոյսն այն զաղտ
պահեալ զճանապարհն, որ անցանէ ընդ խոռն Յուրայ՝ յարեան ի վե-
րայ և սպանին զեպիսկոպոսն»: Ծանոթ. հեղինակի:

II

ԱՆՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՅՔԱՐՆ
ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՆԻԻ ՎՐԱՑ ՅԵՎ ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ՀԱՅ
ՀՈՏԻ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ 1218 Թ.

ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՅՔԱՐՆ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՀԱՍՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԹՎ ԱՆԻՒ ՎՐԱՑ ՅԵՎ ՔԱՂԿԵԴՈՆԻԿ
ՀԱՅ ՀՈՏԻ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1218 Թ.

§ 1. ԱՅՍ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՂԲՅՈՒՐՆ՝
ՅԵՊԻՓԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1218 Թ. ՎՈՐՈՇՈՒՄ Ը

1910 թվի ամռան Անիում պեղումներ կատարելու ժա-
մանակ, ահադ. Ն. Մ ա ու ն յերեվան հանեց քարի վրա փո-
րագրած վրացերեն գլխատառ¹ մեծ արձանագրություն, վորի
տեկստը ֆոտոտիպիկ նկարով, ուսեսերեն թարգմանությամբ
և փոքրիկ զեկուցումով հանդերձ նույն տարին լույս ընծայեց
Ռուս. Գիտ. Ճեմարանի Տեղեկագրում (տես Изв. Акад.
Наук. 1910 թ., եջ 1433—1441. «Надпись Епифания Ка-
толикоса Грузии»): Պարզվեց, վոր նորագյուտ հիշատա-
կարանն Յեպիփան կաթողիկոսի 1218 թ. վորոշումն է: Քանի
վոր այլ և այլ քարերի վրա փորագրած այս յերկար ար-
ձանագրությունը մաս-մաս յեղած հրապարակ հանվեց, այս
պատճառով՝ բոլոր քարերն յերեվան հանելուց հետո՝ ահադ.
Ն. Մ ա ու ը ստիպված յեղավ քարերի սկզբնական կարգն ու
արձանագրության տեկստը վերականգնել, վոր հեշտ բան
չեր: Ինչպես հարկն է քարերը դասավորելուց և արձանա-
գրությունը կարդալուց հետո նա գլխավոր ուշադրությունն
այս հիշատակարանի հնագրական հատկության վրա դարձրեց
(եջ 1433—1437): Ապա նրա զեկուցման մեջ այս արձանա-
գրության վրացերեն տեկստն ու ուսեսերեն թարգմանու-
թյունն է առաջ բերած (եջ 1437—1439) և, ի վերջո, յեր-
կու և կես եջում (1439—1442) համառոտ կերպով այս հի-
շատակարանի այլ և այլ նշանակության մասին ել է խոս-
վում: Այս արձանագրության բովանդակության վրա ըստ

եյուլթյան ակադ. Ն. Մ ա ու ը կանգ չի առել, այլ միմիայն ընդհանրապես մատնանշած ունի, վոր այն հետաքրքիր է վրաց յեկեղեցու ռեֆորմների պատմության համար ևս (եջ 1441):

Չնայած այն հանգամանքին, վոր այս հիշատակարանն յերեվան հանելուց հետո արդեն շատ ժամանակ է անցել, այն ցարդ ուսումնասիրված և ոգտագործած չէ. մինչդեռ այն վոչ այնքան վրաստանի² յեկեղեցական ռեֆորմների, վորքան սոցիալական շարժման պատմության համար ունի նշանակութիւն:

Քանի վոր Ռուս. Գիտ. Ճեմարանի այն որդանը, ուր Յեպիփան կաթողիկոսի 1218 թ. վորոշման տեկստն է տըպված, մեղանում դժվար է գտնել և քանի վոր այն, ինչպես հիշատակեցի, առանձնապես ուշագրավ աղբյուր է, այս պատճառով, վորպեսզի այս հիշատակարանն ամենքի համար մատչելի լինի, այս արձանագրության տեկստն այստեղ առաջ եմ բերում լիովին այնպես, ինչպես այն հրատարակել է ակադ. Մ ա ու ը իր վերոհիշյալ աշխատության մեջ:

ՅԵՊԻՓԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1218 թ. ՎՈՐՈՇՈՒՄԸ³

1. Աստվածային ձայնն ասում է. «Ձրի առաք, ձրի տվեք»⁴, այսինքն ասում է |
2. անմահն աստված. «Այն շնորհի համար, ինչ վոր ինձանից ստացել էք, ինձ մի բան տվե՛ք: Յեվ դուք դեռ վաճառում եք մեծ |
3. շնորհը, վոր ինձանից չեք գնել: Յեթե յես ձեզ ձրի յեմ տվել, ձեզ ել վայել չէ վաճառել աղ |
4. ոթքը ժողովրդին»: Արդ, ձեր հուսով եմ, Անիի յերեցներ, մի լինիք խոչնդոտ |
5. [ասածո] խոսքերին եւ վոչ ել խախտեք առաքյալների պատվիրանները վատ և անցավոր [բաների] համար: Միանգամայն անկան |
6. ոն է պսակադրության համար ձեր կողմից հարյուր դրամ վերցնելը ... |

7. ... ով կարողություն ունի, թող կերակրի: Նույնպես և մեռյալի համար, յեթե մի բան հարկավոր է ... |
8. ... ավելի հարկավոր է նրա հոգու համար: Նույնքան ել Տփղյաց⁵ հարյուրից տրվի և ... |
9. կերակրի, և այլ տրվելիքն ըստ կարողության: Քահանաներին հասնելիքն ամեն ինչ անխափ |
10. ան լինի ձեզ տալու: Այս քաղաքում բնակվող վրացիներ⁶, [պետք է հիշեք, թե ինչպես այն] |
11. առաջ դուք շատ եյիք հարգում: Քահանաներից պահանջվում է աղոթք և ժամասացութիւն: Մի տրտնջաք նրանց ըստ |
12. կարի տրվելիքի համար. առավել ուրախությամբ տվեք այն՝ առանց ստիպման, քանի վոր ուրախ |
13. խությամբ տրվելիքը սիրում է տերը: Յեվ դուք սիրեցեք նրանց իբրև հոգևոր հայրերի, և նրանք սիրեն ձեզ իբրև |
14. հոգեվոր զավակների: Աղոթքին չբացակայեք վոչ դուք [քահանաներ], և վոչ ել դուք [աշխարհականներ]: Ամենուրեք առավելապես աստվածային |
15. սերն առ միմիանս պահեցեք և սրանով աստվածային պատվիրաններից ցանկալին հատուցեք: Այս՝ յես, Յեպիփ |
16. ան⁷ կաթողիկոսս, գրեցի իմ ձեռով, յերբ Անիի յեկեղեցիներն ոծեցի: Տփղյաց⁸ հարյուր դրամն |
17. այսպես լինի՝ Յ-[ից] մի դանգ տրվի, և կովի մորթու [փոխարեն], վորը ցարդ ամբողջովին տարվել և, այժմ իբրև ժամոց |
18. մի-մի շերտ⁹ տվեք: Յեվ մենք յեկեղեցական կանոններն ել ինչձև փոխենք: Ով իմ այս կարգախոսն |
19. դրությունը փոխի, վոչ ... Հրաման է ասածուց և նրա սրբերից քրոնիկոնի 438¹⁰:
- 20¹¹. Թ վ. Ո Կ Է. Ե ս տ է ր Գ ր ի գ ո ր Ե ր [ի ց ա պ ե տ ե պ ի] ս [կ ո] պ ո ս. Ե ս Վ ա հ ր ա մ ա մ ի ր ա յ ք ա ղ ա ք ի ս վ կ ա յ ե մ ք, վ ո ր կ ա թ ա ղ ի կ ո ս ի ն հ ր ա մ ա ն ք Ե ղ ...

§ 2. ԱՆԻԻ ՎՐԱՅԻՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ՀԱՅՈՑ ՀՈՏԻ
ՅԵՐԵՅՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԾԱԴԱԾ ՊԱՅԲԱՐԻ ՊԱՏՃԱՌՆ
ՈՒ ԸՆԹԱՅԲԸ

1218 թ. մի քիչ առաջ Անիի յերեցներն Անի քաղաքի վրացիների և քաղկեդոնիկ հայոց հոտի համար յեկեղեցական հասույթներ զանալը մեծացրել են, պսակադրության և ննջեցյալի թաղման համար, որինսկ, յերեվակայեցեք 100 դրամ էյին պահանջում և վերցնում ել էյին: Մյուս հասույթներն ել, ըստ յերեվութին, զգալի կերպով մեծացրած են յեղել:

Անիում պսակի և թաղման համար քահանաներից սահմանված սակագինը, 100 դրամը, Անիի վրացիներին և քաղկեդոնիկ հայերին հուզել և և այս հողի վրա նրանց միջեվ ծագած անհամաձայնությունը չափազանց լարել և մինչ այդ գոյություն ունեցող խաղաղ փոխհարաբերությունները: Հոժարակամ և հաճույքով, «առանց ստիպման», ծուխը չէր ուղղում այսքան փող վճարել յերեցներին, այս պատճառով քահանաներին, ինչպես այդ՝ Յեպիփան կաթողիկոսի խրատը պարունակող արձանագրությունից յերեվում ե, իրենց սակագնի համեմատ վարձատրություն ստանալու համար վիճակվում եր «ստիպման»-ը դիմել: [Իսկ յեթե մեկը սկսում ե ուրիշին] վտանահարել, դա նշանակում ե [վոր նա ուղղում ե] ուրիշի ծայրահեղ նեղությունից ոգավել: Հովվից առ իր հոգեվոր դավանները՝ հոտի անդամներն՝ [ցույց տալով] այսպիսի վերաբերմունքն, ի հարկե, վայելուչ վարմունք չէր, և ծուխում դեպի յերեցն ատելությունից տարբեր բան առաջ չէր բերի:

Քանի վոր այս սակագնով հոտի անդամներին յոլութական շահը միատեսակ տուժում եր, այս պատճառով, ըստ յերեվութին, բոլորն՝ այսքան փող պահանջող քահանաներին ընդգրկմադրում ե:

Թյուն են ցույց տվել: Սրա շնորհիվ փոխհարաբերություններն ավելի ևս լարվել են, և յերեցներն ու ծուխն յերկու հակադիր բանակ են կազմել: Ի պատասխան սրան՝ ծուխն իրենց յերեցներին առաջվա նման՝ «քահանաներին հասնելիքն ամեն ինչ անխափան» չի թողել, այլ և իր կողմից ամեն տեսակ միջոցներով ընդգրկմադրել և հասույթներ տալուն:

Այս յերկու՝ թշնամաբար իրար տրամադրված բանակների միջեվ փոխհարաբերություններն այնքան լարվել են, վոր պայքարը նույնիսկ յեկեղեցու մեջ ե խրվել և՛ իբրեվ նշան անբավականության՝ յերեմն յեկեղեցիներից մի մասում ծուխն այլևս չէր հաճախում իրենց հովվի [մատուցած] ժամպատարագին, իսկ յերեմն՝ հոտի վրա ցանկալի ճնշում գործ դնելու և բարձր սակագնին հավանություն տալու համար՝ ինքն յերեցն ժամպատարագից զրկում եր իր ծուխին:

§ 3. ՅԵՊԻՓԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ 1218 Թ. ԱՅՍ ԱՆՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒՄՆ ՈՒ ՎՃԻՌ ԿԱՅԱՅՆԵԼԸ

Այս լարված փոխհարաբերություններին ու պայքարին վերջ տալը կարող եր միմիայն արտաքին՝ հեղինակությամբ ոժտված՝ անձն, և գործը նույնիսկ մինչեվ Վրաստանի կաթողիկոսին հասավ: Յերբ 1218 թ. Յեպիփան կաթողիկոսը վրաց յեկեղեցիներն ոճելու համար Անի յե ժամանել, այնտեղ սկսել և այդ անհամաձայնությունը քննել և իր վորոշումն ել և կայացրել: Պետք ե յեթնադրել, վոր կաթողիկոսի անձամբ Անի ժամանումը նպատակ պիտի ունենար վոչ այնքան նոր յեկեղեցիների ոճումը, վորքան ել այս՝ ծագած անհամաձայնության քննումն ու կարգավորումը: Անի իջնելուն և գործի ամբողջ եյությանը ծանոթանալուն պես կաթողիկոսն առանց տատանվելու հոտի կողմն են անցել և Անիի յերեցներին վարմունքը սաստիկ կերպով պախարակել¹²: Իր վորոշման և արձա-

նագրության մեջ նա ուղղակի ասում ե. ինչպես աստված Հիսուս Քրիստոսը հրամայել ե, «Ձեր առաք, ձեր տվեք», յեթե ձեզ «ձեր յեմ տվել, ձեզ ել վայել չե վաճառել աղոթքը ժողովրդին»,—նույնպես և, այս պատգամի համաձայն, աղոթք անելու համար քահանան վոչ մի վարձատրություն չպիտի վերցնի. նամանավանդ «միանգամայն անկանոն ե պսակադրության համար ձեր կողմից հարյուր դրամ վերցնելը», և այսքան ել մեռյալի համար:

Սրանից ավելի պարզ և ուժգին կերպով Անիի յերեցների գործելակերպի պախարակումն անկարելի յե յերեվակայել: Այն ել զարմանալի յե, վոր Վրաստանի յեկեղեցու հովվապետը քահանաներին այսպես՝ առանց քաշվելու և հրապարակա՛վ՝ կշտամբեց և նրանց վարձումն քը «միանգամայն անկանոն» անվանեց: Անիի վրաց և քաղկեդոնիկ հայոց հոտը կաթողիկոսի այս խոսքերում ի հարկե կարող եր Անիի քահանաների կշտամբանքը կարդալ և իրեն զգար գոնե բարոյապես բավաբարված:

Այս պարզ հայտարարությունից հետո Յեպիփան կաթողիկոսն յերկու կողմին ել հասկացնել ե տալիս, վոր հովվի և հոտի միջև սիրո վրա հենված փոխհարաբերությունները պիտի տիրեն. «ամենուրեք առավելապես աստվածային սերն առ միմիանս պահեցեք և սրանով աստվածային պատվիրաններից ցանկալին հատուցեք»: Քրիստոնեյության այս վերնագույն պատվիրանի համաձայն կաթողիկոսն յերկու հակամարտ կողմերից խնդրում եր. ժողովուրդ՝ քահանաներին «գուք սիրեցեք իրե և հոգևոր հայրերի, և նրանք սիրեն ձեզ իրե և հոգևոր զավակներին»:

Սակայն Յեպիփանը, ըստ յերևույթին, լավ հասկանում եր, վոր այնտեղ, ուր փոխհարաբերությանց մեջ փողի հաշիվ կար խառնված, և նրանից հետո, յերբ յերեցներն իրենց սակագնի համեմատ հառույթն ստանալու համար «ստիպմանը» դիմեցին, առաջվա խաղաղ և հաճո փոխհարաբերությանց վերականգնումը լոկ դատարկ խրատով և աղերսան-

քով անկարելի յեր: Մյուս կողմից, նրա համար այն ել պարզ եր, վոր ավետարանի պատգամը քահանայական պարտականությունը ձրի կատարելու մասին այն ժամանակ և նրանից ել շատ առաջ լոկ անհասկանալի իդեալ եր դարձել: [Յեվ] յեթե Յեպիփան կաթողիկոսն Անիի քահանաներին այս պատգամն այնուամենայնիվ հիշեցրեց, միմիայն այն նպատակով, վոր նրանց սակագնի ամբողջ անհամապատասխանությունը ցույց տար նրանց: Յերեցների կատարյալ անվարձատրության մասին Անիի վրացի բնակիչներն ել, ի հարկե, չեյին սկսի խոսել:

Ըստ այսմ, Վրաստանի յեկեղեցու ղեկավարն Անիի հոտին հետևյալ խրատով ե դիմել. քանի վոր լավ գիտեք, վոր «քահանաներից պահանջվում ե աղոթք և ժամասացություն, մի տրտնջաք նրանց ըստ կարի տրվելիքի համար. առավել ուրախությամբ տվեք այն՝ առանց ստիպման, քանի վոր ուրախությամբ տրվելիքը սիրում ե տերը»:

Անիի յերեցների կողմից սակագին պահանջված 100 դրամի փոխարեն, ուրեմն, կաթողիկոսն իրավացի յե գտել միմիայն «ըստ կարի տրվելիքը»: Դժբաղդաբար, Յեպիփան կաթողիկոսի 1218 թ. արձանագրության հենց այն տեղերը, ուր այս «ըստ կարի տրվելիքի» քանակն ե յեղել սահմանված, թերի յե և բնագրի ճշտորեն վերականգնումը դժվար ե, սակայն արձանագրության վերջին մասն այս թերի տեղերի բովանդակությունը հասկանալու հնարավորությունն այնուամենայնիվ տալիս ե:

Յեպիփան կաթողիկոսի խոսքով, անհամաձայնությունն այնպես պիտի լիներ լուծված, վոր ինչպես պսակադրության, նույնպես և ննջեցյալի հոգվոցը կատարելու համար յերեցին «նույնքան ել Տփղյաց (ի նկատի յե առնված փողը՝ դրամն) հարյուրից տրվի» և վորքան ել «կարողությունն ունենա, կերակրի»: Իսկ ննջեցյալի թաղմանը քահանային «այլ տրվելիքն ըստ կարողության» տան:

Սակայն Տփղյաց հարյուր դրամն Անիի յե-
րեցներն աշնակես չպիտի ստանային, ինչպես
իրենք եյին ցանկանում, այլ այն դիտողու-
թյամբ և հաշվով, վոր «Տփղյաց հարյուր դը-
րամն աշնակես լինի՝ 3-[ից] (այսինքն յերե-
քից) մեկը տրվի, և կովի մորթու [փոխարեն],
վորը ցարդ ամբողջովին տարվել է, այժմ ին-
քեզ ժամոց միմի շերտ տվեք»:

Հետևապես, Յեպիփան կաթողիկոսը հասույ-
թի քանակը նվազեցրել է աշնակես, վոր յերեք
դանգի փոխարեն մի դանգ տալն է սահմա-
նել¹³ և յերեցի հասույթն՝ ծուխը հենց այս
դիտողությամբ ևլ պետք է հաներ: Թե վորքան
դանգ եր համրվում այս ժամանակ մեկ դրամում, սրա
մասին առայժմ, դժբաղդաբար, տվյալներ չունինք: Իսկ
նախնական համեմատությամբ դանգն, ինչպես ինքն անունն
եւ այս ցույց է տալիս, դրամի $\frac{1}{4}$ -որդն էր: Բայց հետո
դանգը դրամի $\frac{1}{6}$ -որդի արժեքն ուներ: Իսկ Վրաստանում
XVI—XVII դ. արժաթում¹⁴ հինգ յերկապատիկ դանգ եր
համրվում (տես իմ «Վրաց դրամա-և չափադիտությունը,
կամ նումիդմատիկա-մետրոլոգիա»-ն¹⁵): Սակայն, ինչպես
եւ ուղում ենք հաշվենք, քանի վոր առաջվա յուրաքանչյուր
յերեք դանգի փոխարեն ծուխն այսուհետև 1 դանգ պիտի
վճարեր, պարզ է, վոր հասույթի քանակն Յեպի-
փան կաթողիկոսն յերեք անգամ նվազեցրել
է և, ըստ այսմ, Տփղյաց 100 դրամի փոխարեն
յուրաքանչյուր Անեցի վրացի կամ քաղկե-
դոնիկ հայ բնակիչը պետք է Տփղյաց 33 դրա-
մից մի քիչ ավել վճարեր: Սակայն փողի վճարումը
պսակադրության և ննջեցյալի թաղման կարգը կատարելու
համար Յեպիփան կաթողիկոսն, ուրեմն, (ճանաչել է իբրև
«տրվելիք ըստ կարողության»:

Պսակադրությունից կամ ննջեցյալին թաղելուց հետո,
նորապսակների ազգականներն ու [ննջեցյալի] կտակակատար-

ները, վորքան էլ ընտանիքը «կարողություն
ունի», ըստ սովորութի միմիայն «թող կերակրի», — հրա-
մայել է Յեպիփան կաթողիկոսն Անիում: Այստեղ եւ նկատ-
վում է, [վոր] Անեցի քահանաները մեծ ախորժակ են ունե-
ցել և իրենց ծուխից, ինչպես յերևում է, գերազանց հյուրա-
սիրություն են յեղել պահանջելիս: Վրաց յեկեղեցու
դեկավարն այստեղ եւ ծուխի կողմն է անցել
և անհրաժեշտ է գտել յերեցների ախորժակին
սահման դնել:

§ 4. Յեպիփանի վճարողութուն Մեջ Ծեպիսի ՀԱՍՈՒՅԹ- ՆԵՐԻՑ ՀԻՇՎԱԾ ՏՐՎԵԼԻՔԻ, ԺԱՄՈՑԻ ՅԵՎ ՇԵՐՏԻ ՌԵԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆ. Ն. Մառն Ալիշանի «Շիրակ»-ի (եջ 63—64)¹⁶
վկայությունն առաջ բերելով՝ նշած ունի, վոր Անիի Գրիգոր
հայոց յեպիսկոպոսը վերացրել է այն կանոնը, վորով Անիի
բնակիչները պարտավոր եյին Անիի հայոց յեպիսկոպոսին
յուրաքանչյուր տարի գատիկ որը զվարակի մորթի մատու-
ցանել: Ն. Մառն յենթադրում էր, վոր Յեպիփան կաթողի-
կոսի Անիի 1218 թ. արձանագրության մեջ եւ հենց այսպիսի
զվարակի մորթու մասին է խոսքը, և կարծում էր, վոր
Գրիգոր հայոց յեպիսկոպոսի կողմից զվարակի մորթու հա-
սույթի վերացումը վրաց ծուխին ևս դրդել է այս՝ զվարա-
կի մորթու հասույթին ընդդիմադրել և նրա ու այլ հա-
սույթների վերացման համար պայքարել (Надпись Епи-
фания, Католикоса Грузии. И. А. Н. 1910 թ, եջ 1440):
Բայց իրոք Յեպիփան կաթողիկոսի Անիի 1218 թ. արձա-
նագրության «կովի մորթի»-ն բնավ եւ նկատի չունի
տոնական՝ զվարակի մորթին, և հոտի ու յերեցների միջև
առաջացած անհամաձայնությունն եւ մորթու հասույթի առ-
թիվ չի ծագել:

Յեպիփան կաթողիկոսի Անիի 1218 թ. արձանագրու-
թյան մեջ թաղմանն՝ յերեցի համար սահմանված հասույթի
և հացկերութեքելիսի մասին է խոսքը, և այս տեղում

ավելացրած ե. «և այլ տրվելիքն ըստ կարողութեան»։ Իսկ նույն հիշատակարանի վերջում ասված ե. «յեւ վ կողի մորթու [փոխարեն], վորը ցարդ մաբողջովին տարվել ե, այժմ իբրև ժամոց միմի շերտ տվեք»։ Առաջին նախադասութեան և մանավանդ տերմին տրվելիք (ծաղեբայ)~ի, ինչպես և յերկրորդ նախադասութեան տերմիններէ՝ ժամոց (սածիրավի)~ի և շերտ (շուտի)~ի իմաստը հասկանալու համար պետք ե հիշենք, վոր առաջին նախադասութեանը կաթողիկոսի այն կարգադրութեան մասին ե, վորը ննջեցյալի հոգւոցի և թաղման համար սահմանված հասուցթին ե վերաբերում։ Ըստ այսմ, պարզ ե, վոր այստեղ խոսքը նրա մասին ե, թե մեռյալի ընտանիքից յերեցը, փողն առնելուց զատ, ել ի՞նչ պիտի տաներ կամ կարող եր տանել։ Բայց միմիայն Անիի 1218 թ. արձանագրութեան տվյալներով սրանից ավելի բան հասկանալը միանգամայն անկարելի յե։

Իսկ Երծո-Թիանեթի յեկամտից հաշվառման մատյանի, [ինչպես] և Ծիղկանի յեպիսկոպոսի յեկամտից հաշվառման մատյանի տվյալների շնորհիվ (սրանց մասին խոսքն իմ «Վրաստ. տնտես. պատմութեան» այն գրքումն ե, վորը հարկերի սխտեմին ե վերաբերում¹⁷) Յեպիփան կաթողիկոսի կարգադրութեան իմաստն յերեցական յեկամուտահասութեան մասին արդեն հասկանելի յե դառնում։ Մեկն այն տերմիններից, վորը ննջեցյալի կտակակատարներից յերեցին տրվելիք հասուցթն եր նշանակում, հենց հիշված ե Յեպիփանի արձանագրութեան մեջ։ Նրա խոսքով, Անիի ծխականներն առաջ իբրև ժամոց կողի մորթի յեն տալիս յեղել. այսպես ե յեղել վորոշված «յեկեղեցական կանոններ»~ում։ Այս քանակի փոխարեն վրաց յեկեղեցու ղեկավարը վճուել ե, վոր յերեցին միմիայն միմի շերտ (շուտի) պիտի տրվի։ Այստեղ մի տեսակ խոհանարար ե ներկայացնում այն հանգամանքը, վոր Ծիղկանի յեպիսկոպոսի յեկամտից հաշվառման մատյանում իբրև ժամոց վոչ մի տեղ վոչ մի կողի մորթի և վոչ ել «շերտ» (շուտի) չե հիշված,

առհասարակ այսպիսի տուրք չի յերևում։ Բայց յեթե այնտեղ այսպիսի հասուցթ չի պատահում, նրա փոխարեն սրանից ավելի հին հիշատակարանում ընթերցողն այս տեսակ տվյալներ կգտնի։

Երծո-Թիանեթի յեկամտից հաշվառման մատյանում «շերտ-տրեխ» (շուտի-քալամանի¹⁸) վճարելուն պարտավորված են յեղել հետևյալ գյուղերը, Խիզարի, Գուգույս-Չվարի, Նոկունա, Շիգոնասաձիս-քեղի, Թոռնի և Ծխաբեթի. իսկ Ձագու գյուղը պիտի հաներ «վոչխարի մորթու ուս» (ցիուրիս տղավի մխարի)։ Ավելի մեծ նշանակութուն ունի Սամթավիսի յեպիսկոպոսի յեկամտից հաշվառման մատյանի այն տվյալը, ուր ասված ե. «Յեթե վոք յերեցներին՝ սրա (այսինքն Սամթավիսի յեպիսկոպոսի) հոտն ստանձնած ունենալով՝ մեռնի, պետք ե վոր նրա ընտանիքն, յեթե կարողանա, որինական ծառայի ժամոցը [Սամթավեցուն] մատուցանե, իսկ յեթե վոչ՝ մի մորթու ուս» (տես սրա մասին նույնտեղ՝ «Հարկերի սխտեմը»¹⁹)։

Վերոգրյալից պարզվում ե, վոր «մորթի»~ն դեռևս XV դ—ում համարվում եր իբրև ժամոց։ Անիի 1218 թ. արձանագրութեան և Սամթավիսի յեպիսկոպոսի յեկամտից հաշվառման մատյանի տվյալներն իրարից տարբերվում են միմիայն նրանով, վոր XIII դ. սկզբում «կողի մորթի» կտակարար ծխականներից յերեցին տրվելիք ժամոց ե համարվել իսկ XV դ—ում «մորթու ուս»~ն արդեն հիշվում ե իբրև յեպիսկոպոսին տրվելիք ժամոց ստորագրյալ հանգուցյալ յերեցի ընտանիքի կողմից։ Այսպիսով դարերի ընթացքում ակնհայտի փոփոխութուն ե տեղի ունեցել. սակայն կողի կամ առհասարակ կենդանիների մորթին իր նշանակութունն յեկեղեցական հասուցթների սխտեմում այնուամենայնիվ պահպանել ե։

Բոլոր վերև ասածից հետո ավելի հեշտ հասկանալի պիտի լինի, թե իրոք ինչ ունեի ի նկատի Յեպիփան կաթողի-

կոնս, յերբ Անիի բնակիչներին և յերեցներին հիշեցնում էր, վոր ննջեցյալի կտակակատարներեց այս եր հասնում յերեցին իբրև «այլ տրվելիք ըստ կարողության»։ Անտարակույս, այստեղ ի նկատի յե առնված նույնն, ինչ վոր հետագայում նշան (նիշանի) յեր կոչվում, վորի ուժով պատարագչին սովորաբար տրվում էր ննջեցյալի շորեղեն-զարդարանքն ու սարքուկարգի վորոշ մասը²⁰։ Այս հասցութի քանակի մասին էլ, ըստ յերևույթին, Անիի ծուխի և քահանաների միջև անհամաձայնությունն և յեղելի հոտին այս նշանը կարծես թե մեծ է թվացել։

Արժանի յե հիշատակության, վոր Յեպիփան կաթողիկոսն այստեղ ել ծուխի կողմն է անցել։ Նա զգալիորեն նվազեցրել է այն և, հաստատուն քանակի փոխարեն, սահմանել է նշան տալն ըստ կարողության։

Վորպեսզի կարելի լինի նախատեսել, թե Անիի վրաց և քաղկեդոնիկ հայոց ծուխի համար 1218 թ. հետո վորքան է թեթեւացել ժամոցի բեռը, պետք է գիտենալ շերտի (շուտի) նշանակությունը։ Այս բառը վրաց գրականության մեջ սրանից ավելի հնագույն հուշարձաններումն է հիշված։ Նիկործմիդի XI դ. սիգելում, որ, ասված է. «Նիվշում Զոսքլեցուց ալի գնեցի և տվեցի Ա (1) յեզ, Գ (3) արոր և Ա (1) տրեխշերտ (քալամանի շուտի)» (Ք-կաներ II, 48²¹)։ XIII—XIV դ. Երծոթիանեթի յեկամտից հաշվառման մատյանումն ել այս տերմինը հաճախ է հիշվում։ Սաբա Որբելյանու մեկնությամբ, շերտը (շուտին) «կաշու յերկար կտոր է» (Բառար²²)։ Իսկ պրոֆ. Ն. Մառի խոսքով, Գուրիայում ծերերը դեռևս հիշելիս են յեղել վոր հնում քահանային տալիս էյին կենդանու մորթի, վորն յերկու կճղակի լայնությամբ, միջով, ամենայն կարտեղում, յերկայնությամբ եր կտրվում (տես նրա „Надпись Епифания, Католикоса Грузии“. И. А. Н. 1910 թ., էջ 1436, ծան. 1)։

Պետք է յենթադրել, վոր յերեցին իբրեւ ժամոց կոչի ամբողջ մորթու հասցութը վոչ միայն Անիում, այլ և այն ժամանակվա ամբողջ Վրաստանում²³ իբրև «յեկեղեցական կանոն» է յեղել ընդունված։ Սակայն, յեթե հետագայի յեկամտից հաշվառման մատյաններն աչքի անցկացնենք, կհամոզվենք, վոր այս քաղկեդոնի փոխարեն XIII—XIV դարում «մորթու ուսն» արդեն իբրև հանգուցյալ յերեցի ընտանիքի հասցութ է գրված յեպիսկոպոսի համար, իսկ գեղջուկները միմիայն «շերտ-տրեխ»-ի (շուտի քալամանի) տվողներ են յեղել (տես. Երծոթիանեթի XIII—XIV դ. և Սամթավիսի յեպիսկոպոսի 1459 թ. յեկամտից հաշվառման մատյանները²⁴)։ Պարզ է, վոր Յեպիփան կաթողիկոսի 1218 թ. կարգադրությանը հետեւել է Վրաստանի²⁵ այլ ծուխերի մեջ ևս յեկեղեցական հասցութն եր քանակի նվազեցումը։ Ապագան ցույց կտա, թե բուն Վրաստանում ժամոցի քանակի ալիսի նվազեցումն անցավագնորեն է կատարվել, իբրեւ Յեպիփան կաթողիկոսի 1218 թ. կարգադրության հետեւանք, թե՞ ծուխն ալիսեղ ել սրա համար ստիպված է յեղել պայքարել։

ՀԱՎԵԼՎԱԾ-ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

(ԹԱՐԳՄԱՆՁԻ)

Վորպեսզի հայ ընթերցողին դյուրություն տված լինենք համեմատելու Յեպիփան կաթողիկոսի 1218 թ. Անիի վրացերեն արձանագրությունը Գրիգոր՝ վորդի Ապուղամբի՝ արքեպիսկոպոսի 1217 թ. նույն Անիի հայերեն արձանագրության հետ, վորը նմանապես հետաքրքիր է սոցիալական պայքարի պատմության համար Հայաստանում, առջ ենք

բերում վերջինը համաձայն Ղ. Ալիշանի «Շիրակ»-ի (եջ 63—64):

«...ի միևնույն ամի, որ էր թուականս ՈԿԶ, կա[մաւքն] աստուծոյ ես, Տէր Գրիգոր՝ որդի Ապուղամբի՝ Արհիեպիսկոպ[ոս, կա]մեցաք բառնալ զէզեալ հարկ ի մեր գաւառէս Շիրակա եւ ի քաղաքիս եկեղեցեացս յԱնոյ, զի սահման էր ի սկզբանէ յամենայն զեղէ երկու գրիւ հաց յաթոռա տալ եւ ի քաղաքիս յամենայն եկեղեցիս մորթի մին զատկին տաին. արդ ես յաղագս երկար կենաց պատրոնացն իմոց եւ ազգականացն եւ եղբարց իմոց եւ վասն հոգւոց ննջեցեալոց մերոց թողի զայս հացս ամենայն զեղի մեծի եւ փոքու եւ զատկի մորթին ամենայն եկեղեցոյ. եւ չունի ոք իշխանութիւն պահանջել մինչ ի գալուստն Քրիստոսի ապա եթ... կատարիչք յիշատակիս... ցին յաստուծոյ եւ ամենայն սըրբոց... կենդանութեան եւ տուող... աջ իւրեանց»:

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[¹ «Աստվածաբանութիւն», վորը նույն յեկարագիրն ե. Ղ. Մ.-Բ.]:

[² «Վրաստան» ասելով՝ հեղինակն այստեղ և ստորեւ ի նկատի ունի պետական Վրաստանը (վրաց պետականութիւնը): Ղ. Մ.-Բ.]:

[³ Այս արձանագրութեան հայերէն վոչ ճիշտ թարգմանութիւնն՝ Յ[ուսիկ] Ա[րք]ե[պիսկոպոս]»-ի (Մովսիսեանի)՝ կատարած ուղղորդումն, տես «Արարատ» 1911 թ. ոգոստոս, եջ 664—666: Ղ. Մ.-Բ.]:

[⁴ Մատթէոսի, X, 8: Ղ. Մ.-Բ.]:

[⁵ Բնագրում՝ տփիլուրի (Վրաստանի մայրաքաղաք Տփղիսում կտրած գրամի իմաստով): Ղ. Մ.-Բ.]:

[⁶ Բնագրում՝ քարթվելնո քարթվելնո, վորը գործածված ե «քարթվելնո» դավանության հետևողների իմաստով: Ղ. Մ.-Բ.]:

[⁷ Բնագրում՝ եպիփանէ: Ղ. Մ.-Բ.]:

[⁸ Տես 5-րդ ծանոթ.: Ղ. Մ.-Բ.]:

[⁹ Բնագրում՝ շոլի գոլ, Ն. Մառի մեկնութեամբ ремень, точнее продольная полоса шкуры (Н. Марр, Надпись Епифания, католоса Грузии, стр. 1436. Н. Марр и Я. Смирнов, Вишапы, Лнгр. стр. 92—93): Ղ. Մ.-Բ.]:

[¹⁰ Այսինքն $438 + 780 = 1218$ թ.: Ղ. Մ.-Բ.]:

[¹¹ Այս վերջին տողը հայերէն ե, ուր «կաթողիկոս»-ի փոխարեն գործածված ե «կաթողիկոս» ձեւը: Ղ. Մ.-Բ.]:

[¹² Ձարմանալի յե, վոր պրոֆ. Ն. Մառն ասացուցում եր, իբր թե Յեպիփան կաթողիկոսը վոչ մեկի կողմը չի անցել (տես. op. cit., եջ 1440): Ծանոթ. հետևանքի:

[¹³ Այս հանգամանքը Ն. Մառն ել նշած ունի իր զեկուցման մեջ: Ծանոթ. հետևանքի:

[¹⁴ Բնագրում՝ թեթրի սպիսակ: Ղ. Մ.-Բ.]:

[¹⁵ Վրացերէն, Տփղիս 1925: Ղ. Մ.-Բ.]:

[¹⁶ Սուրբ «Գրիգոր» վորդի Ապուղամբի՝ Արհիեպիսկոպոսի՝ ՈԿԶ—1217 թ. Անիի արձանագրութեան մասին ե, վորի տեկտը կցած ունինք այս հոդվածի վերջում: Ղ. Մ.-Բ.]:

[¹⁷ Դեռ լույս չտեսած: Ղ. Մ.-Բ.]:

[¹⁸ Վրաց. «քաղաման»-ի բառի առնչութեան մասին հայերէն «քալ+աման» || «գալ+աման»-ի հետ՝ վստասման-ի իմաստով՝ տես. Н. Марр. Постановка учения об языке в мировом масштабе и абхазский язык. Ленинград 1928, стр. 25—26: Ղ. Մ.-Բ.]:

[¹⁹ Հմմ. 17 ծանոթ.: Ղ. Մ.-Բ.]:

[²⁰ Սուրբն այսպէս կոչված «կողոպուտ»-ի մասին ե: Ղ. Մ.-Բ.]:

[²¹ Թ. Ժորդանիա, Քրոնիկաներ, վրացերէն, II, Տփղիս 1896: Ղ. Մ.-Բ.]:

[²² Սուլխան-Սաբա Որբելյան, Վրացերէն բառարան, պրոֆ. Հովսէփ Ղափիշիճեյի և պրոֆ. Ակակ Շանիճեյի խմբագրութեամբ, Տփղիս 1928, եջ 404: Ղ. Մ.-Բ.]:

[²³ Հմմ. 2-րդ ծանոթ.: Ղ. Մ.-Բ.]:

[²⁴ Առաջինն ըստ Տփղիսի համալսարանի ձեռագիր վավերագրերի հավաքածուի (վորն այժմ Վրաստանի Պետական թանգարանումն ե գտնվում) № 15, և յերկրորդը՝ նույն հավաքածուի № № 559 և 918, վոր զեռ հրատարակված չեն: Ղ. Մ.-Բ.]:

[²⁵ Հմմ. 2 և 23-րդ ծանոթ.: Ղ. Մ.-Բ.]:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ե Զ
ԱՌԱՋԱԲԱՆ (Թարգմանչի)	3—4
I. ՄԻ ԵՋ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	
ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	7—23
Ծանոթութիւններ	23—24
II. ԱՆՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՅԲԱՐՆ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ	
ՀԱՍՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԹՎ ԱՆԻՒ ՎՐԱՅ ՅԵՎ ՔԱՂԿԵԴՈՒՆԻԿ	
ՀԱՅ ՀՈՏԻ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1218 Թ.	
§ 1. Այս տեղեկանքը պարունակող աղբյուրն՝ Յեպիփան	
կաթողիկոսի 1218 թ. վորդումը	27—29
§ 2. Անիի վրացիների և քաղկեդոնիկ հայոց հոտի յերեց-	
ների միջև ծագած պայքարի պատճառն ու ընթացքը .	30—31
§ 3. Յեպիփան կաթողիկոսի կողմից 1218 թ. այս անհամա-	
ձայնութեան քննումն ու վճիռ կայացնելը	31—35
§ 4. Յեպիփանի վորդման մեջ ծխական հասույթներէից հիշ-	
ված տրվելիքի, ժամոցի և շերտի ռեալ նշանակու-	
թիւնը	35—39
Հավելված-ծանոթութիւն (Թարգմանչի)	39—40
Ծանոթութիւններ	40—41

Պրոֆ. Դր. ԱԲԵՂՅԱՆ, Մ.—«Հայոց լեզվի տեսութիւն» 380 էջ, 1931 թ.	
(սպառած)	
— «Հայոց լեզվի տաղաչափութիւն» 459 էջ, 1933 թ. 12 ռ. (36 ֆր.)	
Պրոֆ. ԱՃԱՌԵԱՆ, ՀՐ.—«Հայերէն արմատական բառարան»	
Ա. Հատոր, Ա.—Բ 1232 էջ, 1931 թ.	
Բ. » Գ—Թ 1350 » 1932 »	
Գ. » Ժ—Կ 1492 » 1933 »	
Դ. » Զ—Յ 1350 » 1934 »	
Ե. » Ն—Ց 1294 » 1935 »	
Զ. » Ս—Ֆ 1626 » 1936 » ապակետիպ, ընդամենը՝ 8344 էջ.	
Է. » (տպագրված) հավելված 209 էջ.	
Յոթը հատորը (սակավաթիվ որինակներ) 315 ռ. (945 ֆր.)	
Ճարտ. ԲՈՒՆՅԱՆ, Ն.—«Հեթանոսական Տաճար Տրդատի պալատին	
կից Գառնի Ամրացում», քառածալ 122 էջ, 1933 թ. 23 ռ. (69 ֆր.)	
Ճարտ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ, Թ.—«Շինանյութերն ու նրանց գործածութեան	
կերպը Հին Հայաստանում 39 էջ, 1932 թ. 1 ռ. 50 կ. (45 ֆր.)	
ԼԱԼԱՅԱՆ, ՅԵՐՎ.—«Դամբանքների պեղումներ Պորհրային Հայաստա-	
նում» 239 էջ, 1931 թ. (սպառած) — (30 ֆր.)	
ԼԵՎՈՆՅԱՆ, Գ.—«Հայոց պարբերական մամուլը սկզբից մինչև մեր որե-	
րը» քառածալ 259 էջ, 1934 թ. 20 ռ. (60 ֆր.)	
Պրոֆ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԱՍ.—«Հայաստանի սեպագրական շրջանի քննական	
պատմութիւն» 556 էջ, 1933 թ. 15 ռ. (45 ֆր.)	
ԿՈՐԿՈՏՅԱՆ, ԶԱՎԵՆ.—«Պորհրային Հայաստանի աղագրականութիւնը	
վերջին հարյուրամյակում» (1831—1931) քառածալ 185 էջ, 1932 թ.	
18 ռ. (54 ֆր.)	
Պրոֆ. ՀԱԿՈԲՅԱՆ, ՀՈՎՀ.—«Ուղեգրութիւններ» Ա. հատոր ԺԳ.—ԺԶ.	
դար. 510 էջ, 1934 թ. (սպառած) — (40 ֆր.)	
— «Ուղեգրութիւններ» Զ. հատոր, 1800—1820. 884 + VIII էջ, բաղ-	
մաթիվ նկարներ, յերկու գունավոր նկար և կից Անդրկովկասի	
քարտեզը XIX դարակազմին 1934 թ. 20 ռ. (60 ֆր.)	
Պրոֆ. Դր. ՄԱՆԱՆԴՅԱՆ, ՀԱԿՈԲ.—«Կշիռները և չափերը հնագույն հայ	
աղբյուրներում» 141 էջ, 1930 թ. (սպառած) — (10 ֆր.)	

- «Մանր հետազոտություններ» 76 էջ, 1932 թ. 2 ռ. 50 կ. (7,5 ֆր.)
- «Երատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը», (Das Eratosthenische Stadion und der persische Asparêz) 66 էջ, 1934 թ. 2 ռ. (6 ֆր.)
- «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» 337 էջ, 1934 թ. 12 ռ. (36 ֆր.)
- ՄԵԼԻՔՅԱՆ, ՍՊ.—Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը 31 էջ, 1932 թ. 1 ռ. 50 կ. (4,5 ֆր.)
- «Ուրվագիծ հայ յերաժշտության պատմության» քառածալ, 89 էջ, 1935 թ. 8 ռ. (24 ֆր.)
- ՊՐՈՓ. ԴՐ. ՄԵԼԻՔՅԱՆ-ԲԵԿ, ԼԵՎՈՆ—«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Ս. հատոր, (Ե.—ԺԲ. դար) 122 էջ, 1934 թ. 12 ռ. (36 ֆր.)
- ՇԱՀԱԶԻԶ, ՅԵՐՎԱՆԴ—Հին Յերևանը (նկարազարդ) 262 էջ, 1931 թ. (սպառած) — (15 ֆր.)
- «Դիվան Միքայել Նալբանդյանի» 392 էջ, 1932 թ. (սպառած) — (36 ֆր.)
- ՊՐՈՓ. ԶԱՎԱԽԻՇՎԻԼԻ, ԻՎ.—«Նյութեր Հայաստանի սոցիալական պատմության համար» X դ. և XIII դ. սկզբներին 41 էջ, 1936 թ. 2 ռ. (6 ֆր.)
- ՊՐՈՓ. ՔԱԼԱՆԹՅԱՆ, ԱՇ.—«Վաղարշապատի պեղումները» 123 էջ, 1936 թ. 3 ռ. 50 կ. (10,5 ֆր.)

ՏՊԱԳՐՎԱԾ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀՐԱՏԱՐԱԿՎԵՆ

- ՊՐՈՓ. ՄԵԼԻՔՅԱՆ-ԲԵԿ, ԼԵՎՈՆ—«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» Բ. հատոր (ԺԳ.—ԺԸ դար.)
- ՊՐՈՓ. ՄԱՆԱՆԴԵԱՆ, ՀԱԿՈԲ—«Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի».
- ՊՐՈՓ. ԱՃԱՌԵԱՆ, ՀՐ.—«Հայոց լեզուի պատմություն»





1

Հայաստանի Ազգային գրադարան



NL0425142

14288